փակակալին Սրբոյն Յակոբայ եւ ծնողայ իւրոց որ եղեւ պատճառ վերստին կազմելոյ եւ նորոգելոյ զրոցս վասն զի բարի առնէ տէր բարեաց... ողորմիա Քս. և միաբան եղբարցս Լեռնակողմանս կրաւնաւորացս և գործաւորացս առ հասարակ, ի թվ. ՊԽԱ. (=1392), կազմեցաւ ձեռամբ անարժան Ստեփանի թերևս արժանի առնէք և զիս յիշատակի և Ա.Ծ. որ առատն է ի տուրս բարեաց ձեզ և մեզ առ հասարակ ողորմեսցի, ամէն»։ Ստեփանոս գրիչ ՊԹ (=1360) թուին Սարգիս միակեցին խընդրանքով նաև կ'ընդօրինակէ Ս. Յակոբի վանքին մէջ Գրիգոր Նարեկացիին աղօթագիրքը և այլ և այլ ճառեր ի հայր. Մեսրոպայ եւ ի սյսրք. Եհմի տեր Գրիգորի (ՄՁ. Թ. 1615)։

Ստեփանոս գրիչ ՊԽԱ. (=1392) թուին դարձեալ կը կազմէ Սաղմոսարան — Ժամագիրք ձեռագիրը (ՄՁ. Թ. 265) և կը գրէ հետևեալ յիշատակարանը. «Զարժանապատուեալ եպսունս. Երուսաղէմայ զտեր Սարգիս և զտեր Եսայի աղաչեմ յիշել, ընդ նմին զհեզահոգի և զհաւատարիմ կր. զՅովհաննես. զփակակալ Սրբոյն Յակոբայ և զծնողս իւր. վասն զի մեծ յուսով ետ զսուրբ մատեանս վերստին նորոգել և կազմել ի յիշատակ իւր և ամենայն երախտաւորաց սրբոյ տաճարիս առաքելական, վասն որոյ աղաչեմ զընթերցողդ խնամով պահել և սրտի մտաւք յիշել յարժանաւոր յաղօթս ձեր զվերոյգրեալ անուանդ և այլ ամենայն միաբան եղբարսդ Սրբոյն Յակոբայ. զկրաւնաւորսդ և զմիայնակեացսդ և զապաշխարողսդ և զամենեսեան առ հասարակ։ Նա և ինձ ի սրտէ խոցելոյս և մեղօք խաւարելոյս թերավարժ աշխատողի սորա և կազմողի Ստեփանոսի ու միաբան եղբարցս Լեռնակողմանս մեղաց թողութիւն խնդրել, և ինքն բարերարն Ա.Ծ. մեզ և ձեզ առհասարակ ողորմեսցի. ի թվ. ՊԽԱ. (=1392), կազմեցաւ Սաղմոսար(ան)։ Յայսմ ամի կատարեցաւ նահատակութիւն Թէոդորոս կթղ.ի հայոց ի մայրաքաղաքն Սիս, որոյ յիշատակ նորա աւրհնութեամբ եղիցի.»։ Դարձեալ նոյնէն, «Գրեցաւ սակաւ գիրս ի հոչակաւոր անապատս Լեռնակողմանս, որ յանուն Ս. Յովհաննու Կարապետին. ի թուին ՊԼԹ (=1390), յուլիս ժ. ձեռամբ Ստեփանոսի (կարուած) սբ. Եմ. տէր Գրիգոր Մսրցուն.» (ՄՁ. Թ. 89)։

ՍՏԵՓԱՆՈՍ ԳՐԻՉ (ԵՐԿԱՅՆ).— Մբ. 1316ին Ս. Հրեշտա-